

„26“ անդամ Ա. Ա. Պ. Կոմ. Համալսարան

Университет им. „26“

802e/


Հեղակա Վահագնի Սական Համալսարան

ԿՈՒՐՍ I

ՔԱՂԱՔԱՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԶՈՐՈՐԴ ԹԵՄԱ

ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ՀԱՎԵԼՑԱԼ ԱՐԺԵՔ



1929-30 թ.

„26“ անվան Ս. Եղբ. Կոմ. Համալսարան
Համալսարան
Համալսարան

33(07)
2-53 ար.

ՀԵՌԱՎԱ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՈՒՐՍ 1

ՔԱՂԱՔԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

5
8
3
2
0
0
5
1
0
9
2
3

ԶՈՐՈՐԴ ԹԵՄԱ

ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

001

2010



1929-30 թ.

39990. ահ.

ԶՈՐՈՐԴ ԹԵՍԱ

ԿԱՄԻՏԱԼ ՅԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

(Առաջադրություն № 3 ինքնուրույն մօակման յել ռեցենզիայի ներկայացնելիք գրավոր աշխատանքի համար)։

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն .

Արժեքն ու փողն ուսումնասիրելիս մենք նկատի ունեինք միմիայն հասարակ ապրանքարտադրողներին, վորոնք ունեն արտադրության անհրաժեշտ միջոցներ և ազատորեն փոխանակում են իրենց աշխատանքի արտադրանքներն ըստ իրենց արժեքի։ Այդպիսի փոխանակության նպատակն ե ստանալ մի սպառողական արժեք մյուսի փոխարեն։ Հավելյալ արժեքի արտադրության և վարձու աշխատանքի շահագործման մասին այստեղ դեռ խոսք լինել չեր կարող վորովհետեւ հասարակ ազգանքային տնտեսության ժամանակ բոլոր արտադրողներն իրենց արամագրության տակ ունեն արտադրության միջոցներ և, հետևաբար, վարձու աշխատանքը բացակայում ե։ Ծանոթանալով ազգանքային արտադրության գլխավոր առանձնահատկությունների հետ, մենք դրանով ավելի՝ մտտեցանք կապիտալիստական տնտեսության ուսումնասիրությանը, մի տնտեսություն, վորը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի բարդ, զարգացած ապրանքային տնտեսություն։

23096.60

Սակայն յեթե նախորդ առաջազրություններում, ապրանքային տնտեսության ընդհանուր որենքներն ուսումնաբանով, մենք միառժամանակ շեղվեցինք վարձու աշխատանքից ու շահագործումից, ապա կապիտալին ու համելյալ արժեքին նվիրված այս առաջազրության մեջ մենք պետք ե յենինք այն բանից, վոր բանվորական ուժն արդեն դառել ե ապրանք, վորն ազատորեն, ըստ իր արժեքի, վաճառվում ե «աշխատանքի շուկայում», վոր, հետևարար, բնակչության մեծ մասը զրկված ե արտադրույթան միջոցներից, վորոնք կենտրոնացած են կապիտալիստների ձեռքում:

Այսպիսով, յեթե հասարակ ապրանքային տնտեսության մեջ մենք դորձ ունենինք հասարակ ապրանքարտորդոնների հետ, վորոնք կանգնած ենին իրար դեմ հանդիման վորպես հասարակության տնտեսապես իրավահավասար անդամներ, ապա այժմ մեր առաջ բոլորին այլ, ավելի բարդ արտադրական հարաբերություններ կան, այն ե կապիտալիստների յել բանվորների, վորպես հակառակորդ դասակարգերի հարաբերություններ:

Հստ ինքյան հասկանալի յե, վոր կապիտալիստական հասարակության մեջ, վորն այժմ մենք սկսում ենք ուսումնաբանել բացի կապիտալիստներից և վարձու բանվորներից գոյություն ունեն նաև այլ դասակարգեր ու խմբակներ,—գյուղացիներ, արհեստավորներ, հողագործներ և այլն։ Սակայն այս առաջազրության մեջ մենք կանգ ենք առնում միմիայն արտադրական այն հարաբերությունների վրա, վոր գոյություն ունեն կապիտալիստական հասարակության հիմ-

նական դասակարգերի՝ կապիտալիստների ու բանվորների միջև։

Դիմելով կապիտալի վերլուծությանը պետք ե նկատի առնել, վոր նրա սկզբնական ձեզ վաշխառուական և վաճառականական կապիտալ եր, վորը պատմականորեն հակառակ եր կանգնած հողային սեփականությանը փողի ձեռվ։ Մարգսն ասում ե, վոր փողն իրենցից ներկայացնում ե ապրանքային շրջանառության վորպես վերջին արտադրանքը բառիս թե պատմական և թե տրամաբանական իմաստով։ Այդիսկ պատճառով նախ քան պատասխանելն այն հարցին, թե ինչ ե կապիտալը, առաջադրության մեջ նախ պարզաբանվում ե այն տարբերությունը, վոր գոյություն ունի ապրանքային շրջանառության (Ա-Փ-Ա) և կապիտալի շրջանառության (Փ-Ա-Փ) միջև (Տես «Մեթոդական ցուցմունքներում» մեր թեմայի առաջին բաժնին վերաբերյալ մասը)։ Այս յերկու ֆորմուների համապատասխան և նրանց եյության պարզաբանումը մեզ պիտի բնորի այն յեզրակացության, վոր փողը, վորպես այդպիսին, շրջանառության պրոցեսում չի կարող վերածվել կապիտալի, վոր այդ պրոցեսում հավելվալ առժեք առաջանալ չի կարող։ Այսուամենայնիվ, «յուրաքանչյուր նոր կապիտալ հարապարակի վրա, ապրանքային, բանվորական և գրամական շուկայում առաջին անգամ յիրեան և գալիս անպայման փողի ձեռվ, — փողի, վորը վորոշ պրոցեսներից հետո պետք ե վերածվի կապիտալի» («Կապիտալ», հատ. I, էջ 92):

Հավելյալ արժեքի և կապիտալի առաջանալը հասկանալու համար անհրաժեշտ ե շրջանառության սփերացից փոխադրվել արտադրույթան սֆերան, վորտեղ

արտադրվում ե արժեքը և վորտեղ, հետևաբար, պետք ե կատարվի նաև հավելյալ արժեքի արտադրության պրոցեսը: Հավելյալ արժեքի պրոբլեմը կայանում ե նրանում, վոր «փողատերը, վորն առայժմ ներկայանում ե միմիայն կապիտալիստի գեմքով, պետք ե ապրանքները գնի ըստ իրենց արժեքի, վաճառի նրանց ըստ իրենց արժեքի, և այնուամենայնիվ վիրջի վերջո արդ պրոցեսից ստանա ավելի արժեք, քան նա դրել ե նրամեջ:

Նրա իսկական կապիտալիստ դառնալը պետք ե տեղի ունենա շրջանառության սֆերայում ե միմույն ժամանակ այդ սֆերայից դուրս», («Կապիտալ», հատ. I էջ 109):

Հավելյալ արժեքի պրոբլեմի լուծումը պետք ե ոկտել սպեցիֆիկ ապրանքի, այն ե բանվորական ուժի ուսումնասիրությունից. այդ ուժը գնում ե կապիտալիստը և գործ ե ածում արտադրության պրոցեսում: Բանվորական ուժի, վորագես ասլրանքի այդորինակ գործածումը հնարավորություն ե տալիս կապիտալիստին վոչ միայն յետ ստանալ նրա (բանվորական ուժի) գնման համար կանխորեն վճարած արժեքը, այլ և ստանալ լրացուցիչ կամ հավելյալ արժեք:

Այս առաջազրության գլխավոր նպատակը պետք ե լինի պարզել կապիտալիստական շահագործման եյությունը, վորն իրականանում ե զարգացած ապրանքային անտեսության գերիշխանության պայմաններում և բոլոր ապրանքների, այդ թվում նաև բանվորական ուժի, վորպես ապրանքի, ըստ իրենց արժողության, վաճառքի պայմաններում:

Հավելյալ արժեքի և կապիտալի տեսությունը, վորը ծառայում ե վորպես բանալի հասկանալու կապիտա-

լիստական անտեսության և դասակարգային փոխարարեկությունների (առաջին հերթին կապիտալիստների դասակարգի և բանվոր դասակարգի փոխարարեկությունների) բարդ մեխանիզմը, պետք ե մշակվի շատ ավելի մասնամասնորեն: Այդ տեսության ուսումնասիրությունը մեզ կրերի կապիտալի, վորպես սպատմական կատեգորիայի (հասկացողության) ճիշտ ըլքոնմանը, մի կատեգորիայի, վորը հատուկ ե ընդհանրապես վոչ բոլոր անտեսություններին, այլ միմիայն անտեսության վորոշ տիպին, այն ե կապիտալիստականին, վորտեղ բանվորական ուժը գործում ե վորպես ապրանք, իսկ արտադրության միջոցները վորպես կապիտալ:

Հավելյալ արժեքի ազդյուրը բանալուց հետո առաջադրության մեջ քննվում են հավելյալ արժեքի արտադրության մերովները (բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքը) և վերջիններիս աղղեցությունը տեխնիկական զարգացման և բանվոր դասակարգի դրության վրա՝ կապիտալիզմի պայմաններում:

Թ Ե Մ Ա Յ Ի Պ Լ Ա Ն Ը

I. Փողի վերածվելը կապիտալի

1. Ապրանքների շրջանառության և կապիտալի շրջանառության փորձություն:

2. Հավելյալ արժեքի առաջնարու անկարելիությունը շրջանառության սիերայում:

3. Բանվորական ուժը փորձեն ապրանք և շուկայում նրայի հարեան գալու պայմանները:

II. Հավելյալ արժեքի արտգույքունը:

1. Բանվորական ուժի սպառման կապիտալիստական պլոցենը:

2. Մշական և փոփոխական կապիտալ և նրանց գերբնավելյալ արժեքի արտադրության մեջ:

3. Հավելյալ արժեքի նորման:

III. Հավելյալ արժեքի մեծացման մերություր:

1. Բացարձակ հավելյալ արժեքի արտադրության մեթոդը:

2. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդը:

3. Հավելյալ արժեքի արտադրությունը և կապիտալիստական տեխնիկայի զարգացումը:

Գ Ր Ա Կ Ա Ց Ե Վ Ի Ր Յ Ո Ւ Ւ

Հիմնական.—1) Ֆ. Միխալեվսկիի—«Քաղաքատնտեսություն», հատված յերկրորդ, գլ. VI—X (եջ. 85—158):

2) Կ. Կառլսովի—«Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը», հրատար. 1922 թ. բաժին I, գլուխ III (եջ 82—103), բաժին II, գլ. I—III (եջ 108—137) և գլ. VI—X (եջ 193—306):

Լ Բ Ա Յ Ո Ւ Ց Ի Չ Զ (Վոչ պարտադիր):

И. Лапидус и К. Островитянов — „Политическая экономия в связи с теорией советского хозяйства“, հրատ. 4, 1928 թ. Գիշ, գինը 1 ո. 60 կ. եջ 492. Отдел II, гл. V — „Общее понятие прибавочной стоимости и капит.“ և гл. VI — „Абсолютная и относительная прибавочная стоимость. Рост капиталистической техники и эксплоатация рабочего класса“, եջ 65—99.

Կ. Մարքս—«Կապիտալ», հատ. I, Գիշ: 1928 թ. 3-րդ հրատ. (կարելի յի ոգտվել յուրաքանչյուր հրատարակությունից): Պետք են կատել, վոր մշակել այն բոլոր գլուխները, վորոնք վերաբերում են փողը կապիտալի վերածվելուն և հավելյալ արժեքի արտադրությանը (300 եջից ավելի), բավական զժվար եւ: Բացի դրանից, «Կապիտալը» կարգալ կարող են միայն այն ընկերները, վորոնք մշակել կամ բավարար չափով ծանոթ են Կ. Կառլսովի «Կ. մարքսի տնտեսական ուսմունքը» գրքի հետ (բաժին II), և կամ, ծայրահեղ դեպքում, ի. Լապիդուսի և Կ. Ուստրովիայանովի „Политическая Экономия“ (II բաժին) դասագրքի հետ: Այդիսկ պատճենով հանձնարարվում են բավականանալ «Կապիտալի» I հատորի հետևյալ հատվածների ուսումնական ուսումնական ուսմունքը:

ա) Պարագափ 3 IV գլուխը. „Կупля и продажа рабочей силы“ (մոտ 10 եջ).

բ) Գլուխ V. „Постоянный капитал и переменный капитал“ (մոտ 10 եջ).

գ) Գլուխ VII-ից պարագ. 1. „Степень эксплоатации рабочей силы“ և կետ 2. „Выражение стоимости продукта в относительных долях предуекта“ (մոտ 20 եջ).

գ) Գլուխ VIII, առաջին յերկու պարագափները (մոտ 9 էջ).

հ) Գլուխ X. „Понятие относительной прибавочной стоимости“ (մոտ 8 էջ).

զ) Գլուխ XIV. „Абсолютная и относительная прибавочная стоимость“ (մոտ 8 էջ):

Այսպիսով ամբողջ մաքսիմումն արտահայտվում է 75 հջում: Այստեղ չմտան «Կապիտալից» չափազանց արժեքավոր տեղեր, վորոնք վերաբերում են՝ կապիտալի ընդհանուր ֆորմուլին (գլ. IV), աշխատանքի պրոցեսին և արժեքի մեծացման պրոցեսին (չափազանց հետաքրքրական մի մաս, վորը վերլուծված է V գլուխում), բանվորական որվան (գլ. VIII), ինչպես և կոռպերացիային, մանուժակտուրային և խոշոր արդյունաբերությանը (գլ. XI—XIII): Այս գլուխների բովանդակությունը համառոտաբար բերված էն Կառլոսկու «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը» գրքի մեջ, վորի հետ անհրաժեշտ ենախորոք ծանոթանալ մաքսիմումի մշակման համար:

ՍՈՒՅՑ ԹԵՄՈՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅԱԿԻ.

1. А. Кон — „Курс политической экономии“, Гиз, 1928 г. ц. 1 р. 95 к. Կազմած, 255 էջ; Раздел III. „Прибавочная стоимость и капитал“, էջ 178 — 251. Ա. Կոնի գիրքը կարող է փոխարինել Լավիդուսի և Ռատրովիտյանովի դասագրքին (ավելի պատրաստվածների համար), կարող է նույնպես Կառլոսկու «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը» գրքին զուգընթաց հիմք ծառայել մինիմումի մշակման համար:

2. А. Дашиковский — „Конспектированный курс политической экономии“ 2 изд., Гиз Украины, 1925 г. Մեր թեմայի համար արժեքավոր են հետևյալ գլուխները. „Капитал и прибавочная стоимость“ և „Мануфактура и крупная промышленность“: Իր աշխատության մեջ հեղինակը նյութը դասավորել է Մարքսի «Կապիտալի» I հատորի նյութերի հետևողությամբ:

3. Ф. Дингельштадт и С. Харин — „Хрестоматия по политической экономии“, т. I, часть 1, Гиз. 1925 г. էջ 454. Կարելի յի ողափորձել հետևյալ նյութերը. „Прибавочная стоимость—Проблема производительного труда“ (էջ 272—328) և „Стоимость как регулятор капиталистического производства“ (էջ 330—346): Քրեստոմանիական այս նյութը կիմավորապես կտորներ և քաղվածքներ են Մարքսի, ենդեւսի և ուրիշների յերկերից:

Том I, часть 2. Այս մասում հավաքված են քաղվածքներ զանազան ազգյուրներից, վորոնք վերաբերում են աշխատանքային արժեքի և կապիտալի թեորիայի քննադատությանն ու հակաքնագատությանը (Критика и антикритика): Ամենաարժեքավոր մասերը նրանք են, վորոնք ծանոթացնում են, թե ինչպես են զարգացնում հավելյալ արժեքի թեորիան Ա. Միտր, Դ. Ռիկարդոն (էջ 114—238). „Предшественники Маркса“:

4. Ю. Борхард — „Капитал Карла Маркса“. Главы IV—VI и VIII—X. Այստեղ տրված են քաղվածքներ «Կապիտալի» I հատորից, Изд. „Моск. Раб.“, 1922 г. էջ 293.

5. Д. Розенберг — „Программа по политической экономии—с комментариями, заданиями и указателем литературы“, Гиз. 1928 г. ц. 60 к.: Արժեքավոր մեթոդական ձեռնարկ սույն թեմայի մշակության համար: Раздел II, занятия 5—8, № 25—41:

6. М. Рубинштейн — „Современный капитализм и организация труда“, 1923 г. «Կապիտալի» համապատասխան գլուխների — мանուֆակտուրա և խոշոր արդյունաբերություն — մեկնաբանությունից զատ, հեղինակը բավական մանրամասն կանգ ե առնում ժամանակակից տեխնիկայի, աշխատանքի կազմակերպության և սոցիալական որենսգրության ու աշխատանքի պաշտպանության վրա: Զափաղանց արժեքավոր ձեռնարկ:

7. А. Богданов — „Краткий курс экономической науки“, изд. „Моск. Раб.“, 1922 г. № 122 — 169. „Развитие техники и крупно-капиталистического производства“. Այստեղ հանրամատչելի լեզվով լուսաբանված ե տեխնիկայի պատմական զարգացումը խոշոր կապիտալիստական արտադրության զարգացման հետ զուգընթաց:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՆՔՆԵՐ ԹԵՄԱՅԻ ԻՆՔՆՈՒ- ՐՈՒՅՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ.

ՊԼԱՆԻ ԲԱԺՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ. — «ՓԱՂԻ ՎԵՐԱԾՎԵԼԸ ԿՈՎԻՏԱԼԻ».

Այս թեմայի ներածության մեջ մենք մատնանշեցինք, վոր վողը, լինելով ապրանքային զարգացման վերջին արտադրանքը, կապիտալի յե վերածվում միմիայն անտեսական զարգացման պատմական վորոշ աստիճանի վրա, յերբ վոչ միայն աշխատանքի արտադրանքները, այլ և բանվորական ուժն ապրանք ե դառնում:

Փողի տարբերությունը վորպես այդպիսին, կապիտալ դարձած փողից համեմատաբար ավելի հեշտ ե նկատվում, յերբ համեմատում ենք ապրանքային շրջանառության փորմուլը Ա—Փ—Ա կապիտալի շրջանառության փորմուլի հետ՝ Փ—Ա—Փ: Այս համեմատությամբ մենք պետք ե պարզենք վոչ միայն այդ փորմուլների միջև գոյություն ունեցող ձևական նմանությունը (նրանք յերկուսն ել ներկայացնում են հակադիր գործողությունների՝ գնման և վաճառքի միասնություն, և այլն), այլ և նրանց միջև գոյություն ունեցող ձևական տարբերությունները և տարբերություններն ըստ եյության (տես Լապիդուսի և Ռոտրովի այսանովի դասագրքի § 24 և Կառուտակու «կ. Մարքսի անտեսական ուսմունքը» գրքի III գլուխի §§ 1 և 2):

Միաժամանակ անհրաժեշտ ե պարզել, նախ, փողի գերը ապլանքաշրջանառության Ա.—Փ.—Ա. փորմուլում (նա ծախսվում ե վերջնականապես) և Փ.—Ա.—Փ փորմուլում (վորտեղ փողը գործ ե ածվում վորպես կանխավճար). յերկրորդ, Ա.—Փ.—Ա. փորմուլի նշանակությունն ու բովանդակությունը (մեկ սպառողական արժեքի փոխարինումը մյուսով), ինչպես և Փ.—Ա.—Փ փորմուլի նշանակությունն ու բովանդակությունը (գնումներ վաճառքի համար, վորի հետևանքով աճում և սկզբնական արժեքը):

Այսպիսով պարզվում է, վոր շրջանառության պրոցեսում վորպես կանխավճար տրված սկզբնական արժեքը վոչ միայն սկանում ե իր սկզբնական մեծությունը, այլ և փոփոխում ե այն, միացնելով իրեն հավելյալ արժեքը: Այստեղ ռարժեքը դառնում է, այսպիսով, վորպես ինքնաշարժ արժեք, ինքնաշարժ փող, և, վորպես այդպիսին, նա կապիտալ և նա դուրս ե գալիս շրջանառության սփերայից, նորից մտնում ե նրա մեջ, պահում և բազմապատկում ե իրեն այդ սփերայում, յետ ե վերադառնում մեծացած վիճակում և նորից սկսում ե միենույն շրջապտույտը: «Այսպիսով, Փ.—Ա.—Փ իոկապես կապիտալի ընդհանուր փորմուն ե, հենց վոր նա անմիջորեն յերեան ե գալիս շրջանառության սփերայում» («Կապիտալ», հատ. I, էջ 100):

Ամենից առաջ պետք ե պարզել, թե վորտեղից ե ստացվում այն ավելորդը, վորին Մարքսը հավելյալ արժեք անունն ե տալիս: Արդյոք նա ապրանքներն իրենց արժեքից ավելի վաճառելուց կամ իրենց արժեքից ավելի պակաս գնելուց չի գոյանում: Հետ ե հա-

մողվել վոր հավելյալ արժեքի գաղտնիքը պետք ե փնտուել վոչ այդ բնագավառում, վոր արժեքի աճման աղբյուրը թագնված ե բանվորական ուժ կոչվող ապրանքի առանձին հատկությունների մեջ, մի ապրանք, վորն իր գործածման պրոցեսում, աշխատանքի պրոցեսում արժեք և հավելյալ արժեք ստեղծելու ընդունակությունը ունի:

Արժեքը, ինչպես մեզ արդեն հայտնի յե, առաջանում է միայն աշխատանքից, իսկ զարգացած կապիտալիստական տնտեսության պայմաններում աշխատանքի ընդունակությունը ունի միմիայն միակ սպեցիֆիկ ապրանքը, այն ե բանվորական ուժ՝ ապրանքը, վորն և, ըստ յերեւյթին, կապիտալիստի համար վոսկե ձվեր և դնում:

Այստեղ անհրաժեշտ ե պարզել, նախ, թե ինչումն ե բանվորական ուժի և աշխատանքի տարբերությունը:

Յերկրորդ, թե ինչ հասուլ—տնտեսական պայմաններ բանվորական ուժն ապրանքի յեն վերածում:

Յերրորդ, թե ինչնիվ ե վորոշվում բանվորական ուժ ապրանքի արժեքը (տես Լապիդուսի և Ռուբովիանովի դասագրքի § 25 և 26):

Չորրորդ, թե ինչնիմն ե կայանում բանվորական ուժի ապրանքի բնորոշ առանձնատկությունը (տես Լապիդուսի և Ռուբովիանովի դասագրքի § 27) և, վերջապես,

Հինգերորդ, թե ինչնիւ միմիայն բանվորական ուժի, վորպես ապրանքի գոյության դեպքում արտադրության միջոցները դառնում են կապիտալ (նույն տես դում § 28):

Վերոհիշյալ հարցերի պատասխանները մեզ կրերեն կապիտալի, վորպես պատմական կատեգորիայի ձիւտ

ըմբռնմանը, մի կատեգորիայի, վորը հատուկ է լոկ հասարակական զարգացման վորոշ աստիճանի. մենք կը բռննենք, այդպիսով, թե ինչ տարբերություններ կան կապիտալիստական հասարակության արտադրական հարաբերությունների և հասարակ ապրանքարտագրողների հարաբերությունների միջև:

(Այն ընկերները, վորոնք այս բաժինը մշակում են նաև Մարքսի «Կապիտալով», պետք և ոգտագործեն «Կապիտալ» IV գլուխը, մանավանդ § 1-ը — «Կապիտալի ընդհանուր ֆորմուլը» և § 3-ը — «Բանվորական ուժի գնումն ու վաճառքը». § 2-ը — «Ընդհանուր ֆորմուլի հակառությունները» կարելի յե փոխարինել Կառուտակու «կ. Մարքսի անտեսական ուսմունքը» գրքի III գլուխի § 2-ով):

ՊԼԱՆԻ II ԲԱԺՆԵՆ ՎԵՐՈԲԵՐՅԱԼ. — «ՀԱՎԵԼՅՈՒ. ԱՐ-
ՃԵՔԻ ԱՐՏՍՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ».

Թեմայի նախորդ յենթաբաժնում մենք տեսանք, վոր արժեք և հավելյալ արժեք արտադրելու ընդունակություն ունեցող բանվորական ուժ-ապրանքը կապիտալիստը գնում և շուկայում: Այս սպեցիֆիկ ապրանքի գործածումը տեղի յե ունենում արտադրության պրոցեսում, ֆաբրիկայում, գործարնում և արհեստանոցներում, կապիտալիստի ղեկավարությամբ ու հակությամբ, վորի մոտ են կենտրոնացած գործիքներն ու արտադրության միջոցները:

Բանվորական ուժի սպառումը ինչպես ասում ե Մարքսը, հենց ինքը՝ աշխատանքն ե: Վորպես միմիայն սպառողական արժեքներ ստեղծող, աշխատանքը գոյություն ունի անկախ վորեւ վորոշակի հասարակա-

կան ձևից, որինակը, թե բնական, թե փոխանակային տնտեսության և թե կոմունիստական հասարակության մեջ: Այդ գեպքում աշխատանքն անհրաժեշտ և հասկանալ վորպես պրոցես, վորը կատարվում և մարդու և բնության միջև, վորպես մի պրոցես, «վորի մեջ մարդըն իր սեփական գործունեյությամբ պայմանավորում, կանոնավորում և հսկում և նյութերի փոխանակության վրա իր և բնության միջև» («Կապիտալ», հատ. I, գլ. 5, եջ 119):

Սա աշխատանքի մի ձևն ե: Իսկ ապրանքային տընտեսության պայմաններում աշխատանքն անխուսափելի-որեն այլ ձևն և ստանում, ավելի ձիշտ, կրկնակի բնույթ և ստանում (կոնկրետ աշխատանք և վերացական աշխատանք) և դրա հետեւանքով նա միաժամանակ ստեղծում և թե սպառողական և թե փոխանակային արժեքներ: Իսկ կապիտալիստական տնտեսության պայմաններում աշխատանքը վարձու աշխատանքի ձև ել ե ընդունում: Այստեղ շատ կարևոր և պարզել այն տարբերությունը, վոր դոյցւթյուն ունի 1) ընդհանրապես յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն ունեցող աշխատանքի և 2) միմիայն ապրանքային տնտեսությանը հատուկ արժեք ստեղծող աշխատանքի, և վարձու աշխատանքի միջև, վորը հատուկ և միմիայն արտադրության կապիտալիստական ձևին:

Աշխատանքի պրոցեսը և կապիտալիստական ձևը վերլուծելիս մենք պետք և պարզենք այն տարբեր գերը, վոր խաղում են այս պրոցեսում հետեւյալ տարբերը: 1) աշխատանքի առարկան կամ որյեկտը. 2) աշխատանքի գործիքը. 3) բանվորական ուժը վորպես նպատակահարմար գործունեյություն, կամ ինքն աշ-

խառանքը (տես Կառւուկու «Կ. Մարքսի տնտեսական ռւսմունքը», բաժին Ա, գլ. 1):

Աշխատանքի պրոցեսի հետևանքում առաջանում են ոգտակար առարկա, արտադրանք, վորտեղ աշխատանքը միանում ե իր որյեկտի հետ, որինակ, վերամշակված հում նյութի, ոժանդակ նյութերի հետ և այլն: Ապա պետք ե պարզել նույն այդ տարրերի դերը արժեքի ավելացման սլրոցեսում, այսինքն պարզել, թե ինչնեմն ե կայանում ոկզրոնքային տարրերությունը մի կողմից բանվորական ուժի, վորտեղ ապահանքի, սպառման և մյուս կողմից արտադրության միջոցների (հում նյութ, շենքեր, մեքենաներ և այլն) սպառման միջև: Իսկ այդ պատասխան կտա հետեւալ հարցերին, թե ինչպես աշխատանքը, մի կողմից պահում և արտադրության միջոցների սկզբնական արժեքը, փոխադրելով այն նոր ստեղծված արտադրանքի, արդյունքի վրա, և մյուս կողմից—ստեղծում ե նոր արժեք, վորոն իր հերթին բաժանվում ե յերկու մասի,—բանվորական ուժի վերաբարդված արժեքի և հավելյալ արժեքի:

Սունձին տարրերի ունեցած դերի մտածված վերլուծությունն աշխատանքի պրոցեսում մեզ համար կը պարզի կապիտալի ճիշտ վորոշումը: Կապիտալի մարքսիստական բնորոշումը և նրա բաժանումը մշական և փոփոխական մասերի՝ վճռական նշանակություն ունի կապիտալիստական շահագործումը պարզաբանելու տեսակետից: Ըստ Մարքսի, «Կապիտալի այն մասը, վորը վերածվում է արտադրության միջոցների, այսինքն հում նյութի, ոժանդակ նյութերի և աշխատանքի միջոցների, արտադրության պրոցեսում իր արժեքի մեծությունը չի փոփոխում» («Կապիտալ»,

հատ. I, գլ. 6, եջ 145): Այդիսկ պատճառով այդ մասը կոչվում է կապիտալի մօտական, անփոփոխ մասը, կամ մօտական կապիտալ:

«Ընդհակառակը, կապիտալի այն մասը, վորը բանվորական ուժի յե վերածվել արտադրության պրոցեսում փոփոխում ե իր արժեքը: Նա վերաբարդում է իր սեփական համարժեքը (եկվիվալենտ) և բացի գրանից մի ավելորդ բանես, հավելյալ արժեք, վորն իր հերթին կարող է փոփոխվել, ավելի շատ կամ ավելի պակաս դառնալ: Կապիտալի այս մասը հաստատուն մեծությունից անդադար վերածվում է փոփոխականի»: Այս մասը կոչվում է փոփոխական կապիտալ (նույն տեղում, եջ 145):

Կապիտալի բաժանումը մշտականի և փոփոխականի՝ ամենասերտ կերպով շաղկապված և Մարքսի ամբողջ տնտեսական ուսմունքի հետ, ամենից առաջ, աշխատանքային արժեքի նրա թեորիայի և հավելյալ արժեքի թեորիայի հետ:

(Մշտական և փոփոխական կապիտալի ուսմունքը բավական հանգամանորեն պարզաբանված և կապիտուսի և Ռուսովիայանովի (§ 29) և Կառաւուկու (բաժին Ա, գլ. 2) գրքերում: «Կապիտալով» աշխատառները պիտի կարգան 1 հատուցից 6-երորդ գլուխը):

Մշտական և փոփոխական կապիտալի քննության հետ միաժամանակ պետք ե պարզել նաև շահագործման այն տառիմանի հարցը, վորն արտահայտվում է հավելյալ արժեքի նորմայի (տոկոսի) միջոցով: Հավելյալ արժեքի նորման արտահայտում է բանվորի կապիտալիստական շահագործման աստիճանը: Այս բոլոր հարցերը հեշտությամբ յուրացվում են, յեթե բավա-

կանաչափ պարզ կերպով հասկանալի յե դարձել արտադրած մթերքի բաժանումը նրա բաղադրյալ մասերի՝ (c + v) + m. Միաժամանակ պետք և նկատի առնել, վոր նոր առաջացած արժեքը յերկու մասի, այն և բանվորական ուժի վերաբարպած արժեքի և հավելյալ արժեքի (կամ v + m) բաժանելուն համապատասխանում են նույնակերպ բանվորական ժամանակի բաժանումը՝ անհրաժեշտ և հավելյալ ժամանակի, կամ արտադրության պրոցեսում ծախսված աշխատանքի բաժանումը՝ անհրաժեշտ կամ հավելյալ աշխատանքի։ Իր հերթին, հավելյալ աշխատանքին հումանվաստախանում և հավելյալ արտադրանքը։

Հավելյալ արժեքի շահագործման հարցն ավելի լավ յուրացնելու համար հանճնարարում ենք ծանոթանալ այն բոլոր որինակների ու հաշվումների հետ, վոր մատնանշված են կապիդուսի և Ռոտրովիայանովի գասագրքի § 30-ում և Կառւասկու գրքի II բաժնի 3-րդ գլխում։ Ավելի պատրաստվածները կարող են կարդալ Մարքսի «Կապիտալի» I հատորի VII գլուխը։

Պ.Ա.ՆԻ III ԲԱԺՆԻՆ ՎԵՐՍԵՐՅՈՒՆ. — «ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ».

Այն բանից հետո, յերբ արդեն պարզված են մեղ համար հավելյալ արժեքի աղյուրը և նրա արտադրության պայմանները, մենք կարող ենք անցնել այդ արժեքն ստանալու մեթոդների ուսումնասիրությանը։

Անհրաժեշտ և տարբերել յերկու մոմենտ, վորոնց ողնությամբ կապիտալիստները մեծացնում ավելացնում են հավելյալ արժեքը. — բացարձակ հավելյալ արժեքի արտադրության մեթոդը և հարաբերական հա-

վելյալ արժեքի արտադրության մեթոդը։ Միաժամանակ պետք և նկատի առնել, վոր յերկու հավելյալ արժեք գոյություն չունի, վոր խոսքը վերաբերում ե լոկ հավելյալ արժեքի յերկու ձևերին՝ բացարձակ և հարաբերական ձևերին։

Բացարձակ հավելյալ արժեքն ուսումնասիրելիս ուշադրության կենտրոնում պետք ե դնել բանվորական որվա հարցը, վորը կապիտալիզմի պայմաններում, բանից գուրս և գալիս, բաժանվում և յերկու մասի, — անհրաժեշտ բանվորական ժամանակի, վորը վորոշվում և բանվորական ուժի արժողությամբ, և հավելյալ բանվորական ժամանակի, վորի ընթացքում բանվորը ձրի կերպով աշխատում և կապիտալիստի համար։ Բանվորական որվա պատճառով կատաղի պայքար և տեղի ունենում կապիտալիստների դասակարգի և բանվորների դասակարգի միջև։ Կապիտալիստները ձգտում են մաքսիմալ չափով յերկարացնել բանվորական որը, վորովհետև այդպիսի յերկարացումից մեծանում և բացարձակ հավելյալ արժեքը։ Իսկ բանվորներն, ընդհակառակը, պաշտպանում են բանվորական որվա այն մեծությունը, վորի հետևանքը չի լինի վոչ Փիղիկական այլասերում և վոչ ել կուլտուրական վայրենացում։

Բանվորական որվա պրոբլեմն ուսումնասիրելիս պետք ե պարզել նախ, ինչից և առաջանում բանվոր դասակարգի և կապիտալիստների դասակարգի պայքարը. յերկորդ, ինչում և կայանում տարբերությունըն ըստ ձևի կապիտալիստական և նախակապիտալիստական շահագործման միջև. յերրորդ, բանվորական որենսդրության, 8-ժամյա բանվորական որվա և այլ իրավունքների համար մզգող պայքարի նշանակու-

թյունը և ընթացքը։ Այս բոլոր հարցերը բավականաչափ լրացրած են կառատսկու զրքի մեջ (բաժին II, գլ. V) և կապիդուսի ու Ռոտրովիտյանովի դասագրքում (§ 31), Վորովս մաքսիմում կարող ե ծառայել Մարքսի «Կապիտալի» I հատորի VIII գլուխը։

Այս աղբյուրների հետ ծանոթանալով հեռակա ուսանողը պետք է բավական պարզ պատկերացում ունենա բացարձակ հավելյալ արժեքի արտադրության միթաղների մասին, — վորը, Մարքսի արտահայտությամբ, կազմում և «կապիտալիստական սիստեմի ընդհանուր հիմունքը և հարաբերական հավելյալ արժեքի արտադրության յելակետը» «կապիտալ», զլ. XIV, էջ 395), — ինչպես և կապիտալիստների դեմ բանվորների ունեցած դասակարգային պայքարի մասին, վորի հետևանքով սահման և գրիում բանվորական որվան և կազմվում ե բանվորական որենսդրություն։

Անցնելով հավելյալ արժեքի հարաբերական ձևի ուսումնասիրության հարցին, ամենից առաջ պետք է կանգ տռնել նրա ընդհանուր ըմբռնման և բացարձակ հավելյալ արժեքից նրա ունեցած տարբերության վրա։ Հարաբերական հավելյալ արժեքի ուսումնասիրությունը անհրաժեշտ է կապակցել աշխատանքի արտադրողականության կիրառման հետ։ Աշխատանքի արտադրության բարձրացումը կապիտալիզմի պայմաններում ծառայում է վորպես ապրանքների աշխատանքային արժեքի իջեցման մի յեղանակ և միենույն ժամանակ հավելյալ արժեքի մեծացման մի մեթոդ։ Այս հարցի պարզաբանության վրա հանձնարարում ենք հարկ հարկ յեղած ուշադրությունը դարձնել։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ զուգընթաց կարող է տեղի ունենալ ախտիսի ապրանքների արժեքի իջեցում, վորոնք իրենց ամբողջությամբ կազմում են բանվորների գոյության միջոցները։ Այն ժամանակ մենք պիտի պարզենք, թե ինչպես աշխատանքի արտադրողականության այդահակի բարձրացումն ազդում է բանվորական ուժի արժեքի վրա, իսկ դրա հետևանքով անդրադառնության հավելյալ արժեքի մեծության վրա։ Անհրաժեշտ է նույնպես պարզել թե կապիտալիստական տնտեսության վրա ճյուղերում պետք է տեղի ունենա աշխատանքի արտադրողականության բարձրացում, վորապեսի իջնի բանվորական ուժի արժեքը և դրա հետեւագնովի կրծատվեր անհրաժեշտ բանվորական ժամանակը, և միենույն ժամանակ մեծանար հավելյալ ժամանակը, և հետևապես, ամեր նաև հավելյալ արժեքը (հարաբերական)։

Անհրաժեշտ է նույնպես պարզել, արդյոք հարաբերական հավելյալ արժեքը մեծանում է, յեթե աշխատանքի արտադրողականությունը մեծանում է արտադրության այն ճյուղերում, վորոնք պատրաստում են բանվոր դասակարգի սպառման անմիջական առարկաները չեղող մթերքներ։ Հենց արտեղ հանձնարարում ենք ուսումնասիրել լրացուցիչ հավելյալ արժեքի (գերվաստակի) և նրա նշանակության հարցը կապիտալիստական տնտեսության մեջ։

Այսպես ուրիմին, հարաբերական հավելյալ արժեքի հարցն ուսումնասիրելիս պետք է պարզել յերկու մոմենտ. ա) բանվորական ուժի արժեքի իջեցումն աշխատանքի արտադրողականության բարձրացման շնոր-

հիվ անտեսության վորոշ ճյուղերում (վ՞ր) և բ) լրացուցիչ արժեքի առաջացումն աշխատանքի արտադրողականականության աճի և տեխնիկայի ու արտադրական պրոցեների կատարելագործությունի աճի հիման վրա՝ արտադրության զանագան ճյուղերում:

(Այդ մասին տես Լապիդուսի և Ռոտրովիտյանովի դասագիրք, § 32 և Կառուտակու մոտ՝ բաժին II, գլ. VII: Նրանք ովքեր ցանկանում են մշակել հարաբերական արժեքի արտադրության մեթոդները սկզբնական աղբյուրներից, կարող են ոգտվել Մարքսի «Կապիտալի» I հատորի X գլուխից):

Սույն առաջադրության վերջում, վորոշես յեզրափակություն, անհրաժեշտ ե ծանոթանալ տեխնիկական առաջընթացության հետ կապիտալիզմի պայմաններում: Բացարձակ հավելյուր արժեքի արտադրության մեթոդը, վոր տեղի ունի ի հաշիվ բանվորական որվայերկարացման, չի նպաստում այդ տեսակ առաջընթացությունը: Յեվ հենց բանվորական որվայերկարացումը հանդիպում է մի շարք խոչընդուների, վորոնք են, ֆիզիկական սահմանափակությունը, վորից այն կողմ բանվարն այլ ես ի վիճակի չի պահպանելու իր ուժեղն ու ֆիզիկական կարողությունները, ինչպես և բարոյական ու կուլտուրական սահմանափակությունը: Հենց այդ պատճառով ել կապիտալիստը, հավելյալ արժեքի յետեից ընկնելով, ստիպված ե անխոսափելու երեն և իր կամքի հակառակ դիմել շահագործման նորմաների բարձրացման այլ մեթոդների, այն և հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդներին: Պետք ե նկատի ունենալ Մարքսի այն խոսքերը, թե, վորոշ տեսակետից, տարբերությունը բաց-

արձակ և հարաբերական հավելյալ արժեքի միջև ընդհանրապես պատրանքային եւ Հարաբերական հավելյալ արժեքը բացարձակ ե, վորովհետև նա պայմանավորում ե բանվորի գոյության համար անհրաժեշտ բանվորական որվայերկարացման հավելյալ արժեքից դուրս: «Բացարձակ հավելյալ արժեքը հարաբերական ե, վորովհետև նա պայմանավորում ե աշխատանքի արտադրողականության զարգացումը, վորը թույլ ե տալիս սահմանափակել անհրաժեշտ բանվորական ժամանակը բանվորական որվա մի մասով» («Կապիտալ», հատ. I, գլ. XIV, էջ 396—397): Հետևաբար, միմիայն հավելյալ արժեքի շարժման պրոցեսում, յերբ խոսք ե լինում բանվորական ուժի շահագործման նորմայի բարձրացման մասին, «տարբերությունը բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի միջև իրեն զգալ ե տալիս» (նույն տեղում, էջ 397):

Այս հիմնական տարբերությունը կայանում է ամենից առաջ նրանում, վոր հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը, բացարձակ հավելյալ արժեքից բոլորովին տարբեր, (վորը հիմնվում ե բանվորական որվայերկարացման վրա), տեղի յեռնենում աշխատանքի արտադրողականության աճման հետ զուգընթաց, և տեխնիկական կատարելագործությունի կիրառման հիմնական խթանն ե հանդիսանում: Հարաբերական հավելյալ արժեքի արտադրության տեսակետից ել պետք ե ծանոթանալ տեխնիկայի զարգացման հետ, սկսած կապիտալիստական կոռպերացիայից և մասնափակությայից և վերջացրած ժամանակակից խոշորմեքենային արտադրությամբ (տես Լապիդուսի և Ռո-

բովիտյանովի դասագրքի § 34): Միաժամանակ, քննելով հիմնական փուլերը տեխնիկայի և, հետևաբար, կապիտալիզմի հառաջընթաց շարժման զարգացման մեջ, չափազանց կարելոր և նշանակություն տալ արտադրության կապիտալիստական ձեռնի (կոռպերացիա, մասնութակուրա, խոշոր-մեքենային արտադրություն) և նախակապիտալիստական բնույթ ունեցող ձեռնի միջն գոյություն ունեցող վորակական և քանակական տարբերություններին:

Կապիտալիստական տեխնիկայի զարգացման սահմանների հարցը, վորի վրա պետք և լուրջ ուշադրություն դարձնել լավ և պարզաբանված կապիտուսի և Ոստրովիտյանովի դասագրքի § 35-ում: Պետք և առանձին ուշադրություն դարձնել այն հոկայական խոշընդուների վրա, վորոնց հանդիպում և տեխնիկական պրոդրեսը կապիտալիզմի պայմաններում, և այն առավելությունների ու հարավորությունների վրա, վոր այդ տեսակետից յերևան և բերում սոցիալիստական տընտեսությունը:

Վերջում հանձնարարում ենք կանգ առնել յերկու կարենը հարցի վրա. գրանցից մեկն և բանվոր դասակարգի դրության վրա կապիտալիստական տեխնիկայի աճի ունեցած ազդեցության հարցը (Լապիդուսի և Ոստրովիտյանովի դասագրքի § 36) և, յերկրորդ, կապիտալիստական ֆաբրիկայի, վորպես արտադրական հարաբերությունների վորոշ սիստեմի բնութագրման հարցը:

Կապիտալիստական տեխնիկայի հարցերի վերաբերյալ բացի կապիտուսի և Ոստրովիտյանովի դասագրքից, կարելի յե հանձնարարել նաև Կառուտակու «Կ.

Մարքսի տնտեսական ուսմունքը» գիրքը, բաժին II, գլուխ VIII—X: Այս գրքում արված և Մարքսի «Կապիտալի» I հատորի XI—XIII գլուխների հանրամատչելի մեկնաբանումը:

(Կապիտալիստական տեխնիկայի նորագույն նվաճումների հարցն այստեղ շոշափված չե: Այդ պատճառով այս ձեռնարկի համար լավ լրացում կլիներ Ռուբինշտենի „Современный капитализм и организация труда“ հանրամատչելի գիրքը, մանավանդ նրա II—III և VII—VIII գլուխները): «Կապիտալի» I հատորի XI—XIII գլուխները, վորոնք խոսում են կոռպերացիայի, մասնութակուրայի ու խոշոր արդյունաբերության մասին, Մարքսը գրել և միանդամայն հանրամատչելի լեզվով:

ԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Ծեցենզիայի ուղարկվելիք գրավոր աշխատանքը պետք և բովանդակի իր մեջ հետեւյալ հարցերի հիմնավորված պատասխանները.

1. Ինչո՞ւ չի կարելի բացատրել նավելյալ արժեքի առաջացումը ավրամելին ցըշանառությունից:

2. Ինչո՞ւ ե կայանում հիմնական տարբերությունը բանվորական ուժի սպառման յել արտադրության միջոցների սպառման միջել յեվ ի՞նչպես և անդրադարձում այդ տարբերությունը հավելյալ արժեքի առաջանալու վրա:

3. Բացատրել այն սկզբունքը, թե ինչպես կապիտալը բաժանվում է մօտական յեվ փոփոխական մասերի, յեվ վերջիններիս դերը հավելյալ արժեքի արտադրության մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ՈԺԾՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ.

1. Հավելյալ արժեք (Պլանի II բաժնին վերաբերյալ). Մարզս, «Կապիտալ», հատ. I, 3-րդ հրատ. Գյու, 1928 թ.
2. Մշտական և փոփոխական կապիտալ (Պլանի II բաժնին վերաբերյալ), նույն տեղում:
3. Հավելյալ արժեքի նորման (Պլանի II բաժնին վերաբերյալ), նույն տեղում:
4. Բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդները (Պլանի III բաժնին վերաբերյալ), նույն տեղում:



2013

«Ազգային գրադարան



ԳՐԱ N0041784

589

28